

որ կրնային առանց ծախուց կատարուիլ : Ուստի չունէին ոչ միայն զանազանութիւն կամ ազնուութիւն հանդերձից, այլ եւ ոչ լուացումն օշնանով, ոչ օծումն (Եղիշ. 173), ոչ սանդրումն վարսից (Փրպ. 332), եւ այլն : Ասկից երկու հետեւութիւն կ'ելնէ. մին՝ թէ այդ զարդարանքները լոկ կոչնոց հետ կապուած էին, եւ ոչ սովորական կերակրոց : Երկրորդ՝ թէ գեղջուկ դասակարգն ալ՝ իւր սեպհական անփութութեամբ առ փափկասիրութիւն՝ զանց կ'ընէր զադոնք իւր ուրախութեանց մէջ : Ասով կրնար Եղիշէ ադոնց հետ համեմատել յիշեալ տիկնայց վիճակն՝ ըսելով. « Իբրեւ մարդք՝ որ վշտամբերք լեալ իցեն անդասին ի շինական սովորութեանցն, տանջելով վարեալ զկեանս աշխարհիս » (173) :

11. —, Ժամանումն : — Մեր տոհմիկ հրաւիրեալք հազուած կոկուած՝ կը հասնին մօտէն կամ հեռիէն : Խնճոյից, այս կարեւոր հանդիսին՝ մասնակցելու համար որ եւ է հեռաւորութիւն չկայ անոնց : Մեր նախարարք զաւառէ զաւառ կը վազեն, եւ վասակ Հայաստանէն մինչեւ ի Վրրկան կը փութայ Յազկերտի կոչնոց. թէեւ առ այդ ուրիշ անկնկալութիւններ ալ ունէր նա : Ու բնական էր՝ որ այդ երկար